

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ (ՀԱՄԱՐԺԵՔ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՅԼ ՏՈՒՐՔԵՐԻ, ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ԳԱՆՁՈՒՄՆԵՐԻ) ՀԱՇՎԵԳՐՄԱՆ ՈՒ ԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

(Սանկտ Պետերբուրգ, 2010 թվականի մայիսի 20)

Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը եւ Ռուսաստանի Դաշնությունը (այսուհետ՝ Կողմեր),

հիմնվելով «Միասնական մաքսային տարածքի ստեղծման եւ Մաքսային միության ձեւավորման մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի պայմանագրի վրա,

առաջնորդվելով միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներով եւ նորմերով,

ելնելով բոլոր Կողմերի հետաքրքրվածությունից, որ ներմուծման մաքսատուրքերը (համարժեք ազդեցություն ունեցող այլ տուրքեր, հարկեր եւ գանձումներ) ժամանակին եւ ամբողջությամբ մուտքագրվեն Կողմերի բյուջեներ,

ցանկանալով ցուցաբերել փոխադարձ օժանդակություն այդ նպատակով,

համաձայնեցին հետեւյալի մասին՝

Հոդված 1

Սույն Համաձայնագրով սահմանվում է Կողմերի միջեւ այն ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրման եւ բաշխման կարգը, որոնք Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների համար հաշվարկելու պարտավորությունը ծագել է ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրման ու բաշխման սույն Համաձայնագրով սահմանված կարգը կիրառելու օրվանից:

Ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրման եւ Կողմերի միջեւ բաշխման այս կարգը կիրառվում է նաեւ Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ նախատեսված

դեպքերում եւ կարգով՝ ներմուծման մաքսատուրքերի գումարների նկատմամբ հաշվարկվող տուժանքի (տոկոսների) գումարների դեպքում:

Հոդված 2

Սույն Համաձայնագրում օգտագործվող հասկացություններն ունեն հետեւյալ նշանակությունը՝

«ներմուծման մաքսատուրք»՝ պարտադիր վճար, որը գանձվում է Կողմերի մաքսային մարմինների կողմից Մաքսային միության մաքսային տարածք ապրանքներ ներմուծելու պարագայում,

«լիազոր մարմին»՝ Կողմի այն պետական մարմինը, որն իրականացնում է տվյալ Կողմի բյուջեի կատարման դրամարկղային սպասարկումը,

«լիազոր մարմնի միասնական հաշիվ»՝ լիազոր մարմնի համար ազգային (կենտրոնական) բանկում կամ ազգային (կենտրոնական) բանկում թղթակցային հաշիվ ունեցող լիազոր մարմնում բացված հաշիվ՝ տվյալ Կողմի բյուջեների միջեւ մուտքերի հաշվեգրման եւ բաշխման համար,

«արտարժութային հաշիվ»՝ տվյալ Կողմի լիազոր մարմնի համար մյուս Կողմի արժույթով ազգային (կենտրոնական) բանկում բացված հաշիվ՝ մյուս Կողմերի կողմից ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված մուտքերը հաշվեգրելու համար,

«կետանցի դեպքում տոկոսներ»՝ այն գումարը, որը Կողմերից մեկը պետք է փոխանցի մյուս Կողմերին սույն Համաձայնագրի խախտման դեպքում, որի հետեւանքով ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված գումարների փոխանցման հետ կապված Կողմերի պարտավորությունները չեն կատարվել, ոչ ամբողջությամբ են կատարվել եւ (կամ) ոչ ճիշտ ժամանակին,

«հաշվետու ամսաթիվ»՝ Կողմի այն աշխատանքային օրը, որի ընթացքում կատարվում է ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրում լիազոր մարմնի միասնական հաշվին,

«ընթացիկ օր»՝ հաշվետու ամսաթվին հաջորդող՝ Կողմի աշխատանքային օրը, որի ընթացքում իրականացվում են հաշվետու ամսաթվի համար ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման գործառնությունները:

Սույն Համաձայնագրում գործածվող մյուս հասկացություններն ու տերմինները կիրառվում են այն նույն իմաստով, որով դրանք գործածվում են Մաքսային միության շրջանակներում կնքված համաձայնագրերում կամ, եթե Մաքսային միության շրջանակներում կնքված համաձայնագրերում նշված տերմինները չեն կիրառվում, ապա՝ Կողմերի ներպետական օրենսդրության մեջ:

Հոդված 3

1. Ներմուծման մաքսատուրքերը ենթակա են այն Կողմի լիազոր մարմնի միասնական հաշվին ազգային արժույթով հաշվեգրման, որում դրանք ենթակա են վճարման՝ համաձայն Մաքսային միության մաքսային օրենսդրության, այդ թվում՝ Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով ներմուծման մաքսատուրքերի գանձման ժամանակ:

Ներմուծման մաքսատուրքերի վճարման հաշվին կարող են կրեդիտագրվել Կողմերի օրենսդրության համաձայն վճարման ենթակա հարկերը, տուրքերը եւ այլ վճարներ, որոնք մուտքագրվել են լիազոր մարմնի միասնական հաշվին:

Ներմուծման մաքսատուրքերը չեն կարող կրեդիտագրվել այլ վճարումների վճարման հաշվին: Վճարողները ներմուծման մաքսատուրքերը փոխանցում են լիազոր մարմնի միասնական հաշվին առանձին հաշվարկային (վճարային) փաստաթղթերով (վճարման հանձնարարականներով):

2. Լիազոր մարմնի միասնական հաշվի վրա գտնվող դրամական միջոցների նկատմամբ բռնագանձում չի կարող տարածվել ո՛չ դատական ակտերի կատարման կարգով եւ ո՛չ էլ որեւէ այլ եղանակով:

3. Կողմերից յուրաքանչյուրի լիազոր մարմիններն առանձին-առանձին հաշվառում են հետեւյալ մուտքերը.

լիազոր մարմնի միասնական հաշվի վրա գտնվող՝ ներմուծման մաքսատուրքերի մուտքերի (վերադարձի) գումարները,

մյուս կողմերի արտարժույթային հաշիվներին փոխանցված՝ բաշխված ներմուծման մաքսատուրքերի գումարները,

տվյալ Կողմի կողմից ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխումից ստացված եկամտի՝ տվյալ Կողմի բյուջե հաշվեգրված գումարները,

ներմուծման մաքսատուրքերի այն գումարները, որոնք մյուս Կողմերը փոխանցել են տվյալ Կողմի բյուջե,

սույն Համաձայնագրով սահմանված՝ կետանցի դեպքում այն տոկոսագումարները, որոնք մուտքագրվել են Կողմի բյուջե:

բաշխված ներմուծման մաքսատուրքերի այն գումարները, որոնց փոխանցումը մյուս Կողմերի արտարժույթային հաշիվներին դադարեցվել է:

Վերոնշյալ մուտքերն առանձին-առանձին արտացոլվում են Կողմերից յուրաքանչյուրի՝ բյուջեի կատարման մասին հաշվետվություններում:

4. Տվյալ Կողմի օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում Կողմի լիազոր մարմնի միասնական հաշվին մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի գումարներն արտացոլվում են հաշվետու տարվա բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

Կողմի օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում բաշխված ներմուծման մաքսատուրքերի գումարները փոխանցվում են այդ Կողմի բյուջե եւ մյուս Կողմերի արտարժույթային հաշիվներին Կողմի ընթացիկ տարվա երկրորդ աշխատանքային օրվանից ոչ ուշ, ինչպես նաեւ արտացոլվում են հաշվետու տարվա բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ :

Մյուս Կողմերի օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում մյուս Կողմերի լիազոր մարմինների կողմից տվյալ Կողմի բյուջե փոխանցված՝ ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված եկամուտներն արտացոլվում են ընթացիկ տարվա բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

Հոդված 4

1. Ներմուծման մաքսատուրքերի հավելյալ վճարված (հավելյալ գանձված) գումարների վերադարձը վճարողին իրականացվում է ընթացիկ օրվա ընթացքում լիազոր մարմնի միասնական հաշվից լիազոր մարմնի միասնական հաշվին մուտքագրված եւ հաշվետու ամսաթվին հաշվեգրված ներմուծման մաքսատուրքերի գումարի սահմաններում՝ հաշվի առնելով վերադարձման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարները, որոնք հաշվետու ամսաթվին կատարման համար չեն ընդունվել ազգային (կենտրոնական) բանկի կողմից:

Ղազախաստանի Հանրապետության լիազոր մարմնի միասնական հաշվից ներմուծման մաքսատուրքերի հավելյալ վճարված (հավելյալ գանձված) գումարների վերադարձն իրականացվում է հաշվետու ամսաթվին վերադարձն իրականացնելու օրվա ընթացքում լիազոր մարմնի միասնական հաշվին մուտքագրված (հաշվեգրված) ներմուծման մաքսատուրքերի գումարների սահմաններում:

2. Ընթացիկ օրվա ընթացքում վերադարձման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարը որոշվում է՝ նախքան Կողմերի բյուջեների միջև մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի բաշխումը:

3. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ներմուծման մաքսատուրքերի վերադարձ իրականացնելու համար բավարար միջոցների բացակայության պարագայում Կողմն իրականացվում է այդ վերադարձը հաջորդ աշխատանքային օրերի ընթացքում: Վճարողին ներմուծման մաքսատուրքերը ոչ ճիշտ ժամանակին վերադարձնելու համար տուժանք (տուկոսներ) վճարվում է այդ Կողմի բյուջեից, եւ դա չի ներառվում ներմուծման մաքսատուրքերի մեջ:

Հոդված 5

1. Կողմի լիազոր մարմնի կողմից ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխումը Կողմերի միջև իրականացվում է Կողմի այն աշխատանքային օրվա ընթացքում, որը հաջորդում է հաշվետու ամսաթվին, որի ընթացքում ներմուծման մաքսատուրքերի գումարները հաշվեգրվել են լիազոր մարմնի միասնական հաշվին:

Ղազախաստանի Հանրապետության լիազոր մարմնի կողմից ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխումը Կողմերի միջև իրականացվում է լիազոր մարմնի միասնական հաշվին ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրման հաշվետու ամսաթվին:

2. Կողմի լիազոր մարմնի միասնական հաշվից տվյալ Կողմի բյուջե, ինչպես նաեւ մյուս Կողմերի արտարժութային հաշիվներին փոխանցման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարի հաշվարկն իրականացվում է Կողմերի միջև բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի ընդհանուր գումարը տուկոսներով սահմանված բաշխման նորմատիվներով բազմապատկելու միջոցով:

Ընդ որում, Կողմերի բյուջեներում բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի ընդհանուր գումարը որոշվում է հաշվետու ամսաթվին փոխանցված (հաշվանցման միջոցով

լիազոր մարմնի կողմից կատարված) ներմուծման մաքսատուրքերի գումարից, հաշվի առնելով ազգային (կենտրոնական) բանկի կողմից կատարման համար չընդունված հաշվետու ամսաթվին ներմուծման մաքսատուրքերի վերադարձվելիք գումարները փոխանցելու վերաբերյալ հաշվարկային (վճարային) փաստաթղթերը (վճարման հանձնարարականները), հանելով ընթացիկ օրվա ընթացքում վճարողներին վերադարձման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարները:

Եթե վճարողին ներմուծման մաքսատուրքի գումարի վերադարձման վերաբերյալ հաշվարկային (վճարման) փաստաթուղթը (վճարման հանձնարարականը), որը ենթակա է կատարման՝ ընթացիկ օրվա ընթացքում, կատարման համար չի ընդունվում ազգային (կենտրոնական) բանկի կողմից, ապա տվյալ գումարը Կողմի հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում Կողմերի միջև ենթակա է բաշխման : Ընդ որում, ներմուծման մաքսատուրքերի այն գումարը, որը սույն կետի համաձայն, չի փոխանցվել մյուս Կողմերի արտարժույթային հաշիվներին, ճանաչվում է մեկ օրով ժամկետանց:

3. Յուրաքանչյուր Կողմի համար ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվները սահմանվում են հետևյալ չափերով.

Բելառուսի Հանրապետություն՝ 4,70%,

Ղազախստանի Հանրապետություն՝ 7,33%,

Ռուսաստանի Դաշնություն՝ 87,97%,

4. Ներմուծման մաքսատուրքերի գումարների փոխանցումը Կողմերին իրականացվում է Կողմերի լիազոր մարմինների կողմից մյուս Կողմերի արտարժույթային հաշիվներին՝ լիազոր մարմնի միասնական հաշվին հաշվեգրման օրվան հաջորդ Կողմի աշխատանքային օրվա ընթացքում:

Յուրաքանչյուր օր տեղական ժամանակով մինչև ժամը 14-ը Կողմերին ներմուծման մաքսատուրքերի գումարների փոխանցման վերաբերյալ հաշվարկային (վճարման) փաստաթուղթը (վճարման հանձնարարականը) պետք է լիազոր մարմնի կողմից ուղարկվի ազգային (կենտրոնական) բանկ՝ մյուս Կողմերի արտարժույթային հաշիվներին հետագա փոխանցման համար: Վերոնշյալ հաշվարկային (վճարային) փաստաթղթում (վճարման հանձնարարականում) նշվում է այն ամսաթիվը, որի ընթացքում իրականացվում է ներմուծման մաքսատուրքերի բաշխումը, ինչպես նաև Կողմերի բյուջեների միջև բաշխման ենթակա գումարը՝ ազգային արժույթով:

Եթե սույն կետում նշված հաշվարկային (վճարման) փաստաթուղթն (վճարման հանձնարարականը) ուղարկվել է Կողմի ազգային (կենտրոնական) բանկ ընթացիկ օրվա ընթացքում տեղական ժամանակով ժամը 14-ից ուշ, ապա համապատասխան վճարումը համարվում է մեկ օրով ժամկետանց:

5. Կողմերի լիազոր մարմինների կողմից սույն Համաձայնագրին համապատասխան արտարժույթային հաշիվներին մուտքագրված՝ ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված գումարները՝ որպես եկամուտ տվյալ Կողմի բյուջե փոխանցելու կարգը կարգավորվում է սույն Համաձայնագրի 1-ին հավելվածով:

6. Կողմերի բյուջեներում ներմուծման մաքսատուրքերի բաշխման եւ փոխանցման գումարների հաշվառումն իրականացվում է լիազոր մարմինների կողմից:

Հոդված 6

1. Կողմերի լիազոր մարմինների միջեւ սույն Համաձայնագրի կատարման համար անհրաժեշտ տեղեկությունների փոխանակումն իրականացվում է երեք կողմերի միջեւ համաձայնեցված ձեւաչափերի միջոցով՝ սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածում սահմանված կարգով եւ ժամկետներում:

Տեղեկությունների փոխանակման ձեւաչափերը համաձայնեցվում են Կողմերի լիազոր մարմինների կողմից սույն Համաձայնագրին ստորագրելու օրվանից հետո երկամսյա ժամկետում եւ, ցանկացած դեպքում՝ ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրման եւ բաշխման՝ սույն Համաձայնագրով սահմանված կարգի կիրառման առաջին օրվանից ոչ ուշ:

2. Հերթական օրացուցային տարվա սկզբից ոչ ուշ, քան տասը օրացուցային օր առաջ Կողմի լիազոր մարմինը տեղեկացնում է մյուս Կողմերի լիազոր մարմիններին տվյալ Կողմի ներպետական օրենսդրությամբ սահմանված ոչ աշխատանքային օրերի մասին:

Ոչ աշխատանքային օրերի փոփոխության դեպքում՝ այն Կողմի լիազոր մարմինը, որտեղ տեղի են ունենալու այդպիսի փոփոխություններ, տեղեկացնում է մյուս Կողմերի լիազոր մարմիններին նշված փոփոխությունների մասին՝ այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան երկու օրացուցային օր առաջ:

3. Այն արտարժույթային հաշվի վավերապայմանների փոփոխման դեպքում, որին պետք է փոխանցվեն ներմուծման մաքսատուրքերի գումարները, այդ փոփոխություններն ուժի մեջ

մտնելու օրվանից ոչ ուշ, քան տասն օրացուցային օր առաջ տվյալ Կողմի լիազոր մարմինը մյուս Կողմերի լիազոր մարմիններին ծանուցում է հաշվի ճշգրտված վավերապայմանների մասին:

Համաձայնագրի կատարման համար անհրաժեշտ այլ տվյալների փոփոխման դեպքում լիազոր մարմինն այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան երեք օրացուցային օր առաջ մյուս Կողմերի լիազոր մարմիններին ծանուցում է նշված փոփոխությունների մասին:

4. Կողմերի միջև բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների բացակայության պարագայում Կողմի լիազոր մարմինը, մյուս Կողմերի արտարժույթային հաշիվներին դրամական միջոցներ փոխանցելու վերաբերյալ հաշվարկային (վճարային) փաստաթուղթը (վճարման հանձնարարականը) ազգային (կենտրոնական) բանկ ուղարկելու համար սույն Համաձայնագրով սահմանված ժամկետում, էլեկտրոնային կապուղիներով մյուս Կողմերի լիազոր մարմիններ է ուղարկում համապատասխան տեղեկությունները՝ այդ տեղեկությունները պարունակող փաստաթղթի գրաֆիկական էլեկտրոնային պատճենի տեսքով:

5. Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեն, Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության մաքսային հսկողության կոմիտեն եւ Ֆեդերալ մաքսային ծառայությունն ապահովում են հաշվեգրման մեթոդով ներմուծման մաքսատուրքերի հաշվառումն իրականացնելու միասնական սկզբունքների վրա հիմնված՝ համաձայնեցված կանոնների կիրառումը:

Հոդված 7

1. Սույն Համաձայնագրով սահմանված ժամկետներում Կողմերից մեկի կողմից արտարժույթային հաշվին դրամական միջոցներ չփոխանցելու կամ ոչ ամբողջությամբ փոխանցելու եւ այդ Կողմի լիազոր մարմնից բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների բացակայության մասին տեղեկություններ չստանալու դեպքում Կողմի լիազոր մարմինը, որի արտարժույթային հաշվին դրամական միջոցներ չեն փոխանցվել, ծանուցում է Կողմերի լիազոր մարմիններին եւ Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարությանը դրամական միջոցները չփոխանցելու կամ ոչ ամբողջությամբ փոխանցելու մասին:

2. Կողմը, որը սույն Համաձայնագրին համապատասխան բաշխված ներմուծման մաքսատուրքերի գումարը չի փոխանցել մյուս Կողմերից մեկի կամ երկուսի բյուջեներ, այդ մյուս Կողմերին, այն արտարժութային հաշիվներին փոխանցման միջոցով, որոնց չեն փոխանցվել համապատասխան դրամական միջոցները, վճարում է տոկոսներ կետանցի դեպքում առաջացած պարտքի ամբողջ գումարի դիմաց՝ 0,1% տոկոսադրույքով կետանցի յուրաքանչյուր օրացուցային օրվա համար՝ ներառյալ այն օրը, երբ ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված գումարը չի փոխանցվել մյուս Կողմին (մյուս երկու Կողմերին):

3. Եթե Կողմերից որեւէ մեկը տեղեկացնում է բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների բացակայության մասին այն դեպքում, երբ նշված գումարներն իրականում առկա են, կամ եթե լիազոր մարմնի միասնական հաշվից դրամական միջոցները ոչ ամբողջությամբ են փոխանցվում մյուս Կողմերի արտարժութային հաշիվներին, ապա այն Կողմը, որը կատարել է սույն Համաձայնագրի նման խախտում, պարտավոր է ոչ ուշ, քան իր հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում մյուս Կողմերին փոխանցել ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված գումարները, որոնք ենթակա են այդ Կողմերի բյուջեների եկամուտներին հաշվեգրման՝ համաձայն սույն Համաձայնագրի՝ ելնելով այն գումարից, որը սույն Համաձայնագրի խախտման հետեւանքով չէր փոխանցվել մյուս Կողմերի արտարժութային հաշիվներին:

Ընդ որում, նման խախտում կատարած Կողմը կետանցի դեպքում տոկոսներ է վճարում սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված չափով կետանցի յուրաքանչյուր օրացուցային օրվա համար, որը համարվում է սույն Համաձայնագրի դրույթների խախտման օրվանից հաշվարկված ժամանակահատվածը՝ չներառելով այն օրը, երբ կողմերին փոխանցվում են դրամական միջոցները՝ սույն կետին համապատասխան:

4. Եթե որեւէ Կողմից դրամական միջոցներ չեն փոխանցվել (ոչ ամբողջությամբ են փոխանցվել) եւ այդ Կողմի լիազոր մարմնից ծանուցում չի ստացվել Կողմերի միջեւ բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների բացակայության վերաբերյալ, ապա այն Կողմի լիազոր մարմինը, որի արտարժութային հաշվին դրամական միջոցներ չեն փոխանցվել, չփոխանցելու (ոչ ամբողջությամբ փոխանցելու) օրվանից հետո Կողմի երրորդ աշխատանքային օրվա ընթացքում, իրավասու է դադարեցնելու իր միասնական հաշվից առաջին Կողմի արտարժութային հաշվին կատարվող ներմուծման մաքսատուրքերի գումարների փոխանցումը:

5. Եթե Կողմը որոշում է ընդունում ներմուծման մաքսատուրքերի գումարների փոխանցումը դադարեցնելու մասին, ապա այն դրամական միջոցները, որոնք ենթակա են փոխանցման մյուս Կողմի արտարժութային հաշվին, պետք է հաշվեգրվեն առաջին Կողմի բյուջեի եկամուտներին՝ մինչև փոխանցումները դադարեցնելու մասին որոշումը չեղյալ հայտարարելը, եւ դրանք առանձին-առանձին հաշվի են առնվում այդ Կողմի բյուջեում:

6. Այն Կողմի լիազոր մարմինը, որը դադարեցրել է մյուս Կողմի արտարժութային հաշվին ներմուծման մաքսատուրքերի գումարների փոխանցումը, մինչև այդպիսի որոշման ընդունումը տեղեկացնում է դրա մասին Կողմերի լիազոր մարմիններին եւ Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարությանը:

7. Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարությունը դրամական միջոցների փոխանցումը դադարեցնելու մասին որոշում կայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ խորհրդակցություններ է կազմակերպում Կողմերի գործադիր իշխանության մարմինների հետ ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման մեխանիզմների գործունեությունը հնարավորինս վաղ ամբողջությամբ վերականգնելու համար:

8. Կողմերից մեկի կողմից ներմուծման մաքսատուրքերի գումարների փոխանցումը վերականգնելու մասին որոշում կայացնելու անհնարինության պարագայում տվյալ հարցի առնչությամբ անց է կացվում Մաքսային միության հանձնաժողովի նիստ:

Մաքսային միության հանձնաժողովի կողմից ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման մեխանիզմների գործունեության վերականգնման վերաբերյալ որոշում կայացնելու անհնարինության պարագայում տվյալ հարցը քննարկման է ներկայացվում Եվրասիական տնտեսական համայնքի միջպետական խորհրդի (մաքսային միության բարձրագույն մարմին) նիստում:

9. Մաքսային միության հանձնաժողովի կամ Եվրասիական տնտեսական համայնքի միջպետական խորհրդի (մաքսային միության բարձրագույն մարմին) կողմից ներմուծման մաքսատուրքերի գումարների փոխանցումը վերականգնելու մասին որոշում կայացնելու դեպքում, սույն հոդվածի 5-րդ կետում նշված գումարները ենթակա են փոխանցման այն Կողմերի արտարժութային հաշիվներին, որոնց համար դրանք նախատեսված էին սույն Համաձայնագրին համապատասխան, որոշում կայացնելու մասին ծանուցումն ստանալու օրվան հաջորդող՝ Կողմի աշխատանքային օրվանից ոչ ուշ, ընդ որում՝ նշված գումարի համար կետանցի դեպքում տոկոսներ չեն հաշվարկվում:

10. Կողմերից մեկի կողմից արտարժույթային հաշիվներին չփոխանցված՝ բաշխված ներմուծման մաքսատուրքերի գումարները, ինչպես նաև Կողմերի ազգային (կենտրոնական) բանկերի կողմից ԱՄՆ դոլարով դրամական միջոցների փոխանցման մասով չկատարված պարտավորությունների գումարներն ավելացվում են պետական պարտքին:

Հոդված 8

1. Սույն Համաձայնագրի կատարումը վերահսկվում է Մաքսային միության հանձնաժողովի կողմից:

2. Մաքսային միության հանձնաժողովը սույն Համաձայնագրի կատարման մասին կառավարությունների ղեկավարների մակարդակով Եվրասիական տնտեսական համայնքի միջպետական խորհուրդ (Մաքսային միության բարձրագույն մարմին) տարեկան զեկույց է ներկայացնում:

3. Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ՝ Կողմերի լիազոր, մաքսային եւ այլ պետական մարմինների աշխատակիցներից ու այլ ներգրավված մասնագետներից կարող է ստեղծվել հատուկ կոմիտե՝ Կողմերի կողմից ներմուծման մաքսատուրքերի ստացված գումարների հաշվեգրման եւ բաշխման կարգի պահպանումը վերահսկելու (աուդիտ իրականացնելու) համար:

4. Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեն, Ղազախստանի Հանրապետության՝ հանրապետական բյուջեի կատարման վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեն, Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատը, համատեղ վերահսկողական միջոցառումների շրջանակներում, յուրաքանչյուր տարի ստուգում են Կողմերի լիազոր մարմինների կողմից սույն Համաձայնագրի դրույթների պահպանումը:

5. Բելառուսի Հանրապետության մաքսային պետական կոմիտեն, Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության մաքսային վերահսկողության կոմիտեն եւ Ֆեդերալ մաքսային ծառայությունը սահմանում են ներմուծման մաքսատուրքերի վճարման հետ կապված տեղեկատվության փոխանակման միասնական կարգ:

Հոդված 9

1. Սույն Համաձայնագրի 1-ին եւ 2-րդ հավելվածները Համաձայնագրի անքակտելի մաս են համարվում:

2. Կողմերի համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են սույն Համաձայնագրի անքակտելի մաս համարվող արձանագրությունների միջոցով:

Հոդված 10

Կողմերի միջեւ սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են շահագրգիռ Կողմերի միջեւ խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, շահագրգիռ Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ վեճը փոխանցվում է Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ամսվան հաջորդող ամսվա առաջին օրը, երբ ավանդապահը դիվանագիտական ուղիներով ստացել է վերջին գրավոր ծանուցումը Կողմերի կողմից սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին, սակայն «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ շուտ:

Հոդված 12

1. Սույն Համաձայնագիրն ստորագրելու օրվանից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում Կողմերի լիազոր մարմիններն իրականացնում են այն արտարժույթային հաշիվների մասին տեղեկությունների փոխանակում, որոնց Կողմերը պետք է փոխանցեն ներմուծման մաքսատուրքերը, ինչպես նաեւ սույն Համաձայնագրին համապատասխան՝ ներմուծման մաքսատուրքերի գումարների փոխանցումն իրականացնելու համար անհրաժեշտ այլ տեղեկությունների փոխանակում:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո վեց ամսվա ընթացքում Ռուսաստանի Դաշնությունն ու Բելառուսի Հանրապետությունն ապահովում են Ռուսաստանի Դաշնության լիազոր մարմնի միասնական հաշվին եւ Բելառուսի Հանրապետության լիազոր մարմնի միասնական հաշվին առանձին հաշվարկային (վճարային) փաստաթղթերով (վճարման հանձնարարականներով) վճարողների կողմից ներմուծման մաքսատուրքերի վճարումը:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2010 թվականի մայիսի 20-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր Կողմի կտրամադրի հաստատված պատճենը:

Բելառուսի
Հանրապետության
կողմից

Ղազախստանի
Հանրապետության
կողմից

Ռուսաստանի
Դաշնության
կողմից

Հավելված 1

Մաքսային միությունում ներմուծման մաքսատուրքերի (համարժեք ազդեցություն ունեցող այլ տուրքերի, հարկերի, եւ գանձումների հաշվեգրման եւ բաշխման կարգի սահմանման եւ կիրառման մասին Համաձայնագրի

1. Կողմերից մեկի (առաջինի) ազգային (կենտրոնական) բանկը պարտավոր է մյուս Կողմի (երկրորդի) ազգային (կենտրոնական) բանկին ԱՄՆ դոլարով վաճառել դրամական միջոցներ՝ առաջին Կողմի ազգային արժույթով այն գումարի դիմաց, որը հավասար է առաջին Կողմի ազգային արժույթով այն գումարին, որը փոխանցվել էր երկրորդ Կողմի լիազոր մարմնի արտարժույթային հաշվին՝ համաձայն «Մաքսային միությունում ներմուծման մաքսատուրքերի (համարժեք ազդեցություն ունեցող այլ տուրքերի, հարկերի եւ գանձումների հաշվեգրման ու բաշխման կարգի սահմանման եւ կիրառման մասին» Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր): Սույն կետին համապատասխան վաճառվող ԱՄՆ դոլարի գումարը սահմանվում է ԱՄՆ դոլարի նկատմամբ առաջին Կողմի ազգային արժույթի պաշտոնական փոխարժեքով, որը որոշվում է առաջին Կողմի ազգային (կենտրոնական) բանկի կողմից՝ երկրորդ Կողմի լիազոր մարմնի արտարժույթային հաշվին առաջին Կողմի ազգային արժույթով դրամական միջոցների փոխանցման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

1-ին հավելվածի (այսուհետ՝ Համաձայնագրի հավելված) սույն կետով սահմանված՝ ԱՄՆ դոլարով դրամական միջոցներ վաճառելու պարտավորությունը պետք է կատարվի առաջին Կողմի ազգային (կենտրոնական) բանկի կողմից երկրորդ Կողմի լիազոր մարմնի արտարժույթային հաշվին առաջին Կողմի ազգային արժույթով համարժեք գումարի փոխանցման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ:

Ընդ որում, սույն կետով սահմանված՝ ԱՄՆ դոլարով դրամական միջոցներ վաճառելու պարտավորությունը պետք է կատարվի Կողմերից յուրաքանչյուրի ազգային (կենտրոնական) բանկի կողմից՝ առաջին եւ երրորդ կամ երկրորդ ու երրորդ Կողմերի միջեւ հարաբերություններում համանման իրավունքների իրականացումից եւ պարտավորությունների կատարումից անկախ:

Երկու Կողմերի ազգային (կենտրոնական) բանկերը պայմանագրով կարող են սահմանել, որ ԱՄՆ դոլարով դրամական միջոցների փոխանցման հետ կապված հանդիպակաց

պարտավորությունների, այդ թվում՝ Համաձայնագրի սույն Հավելվածի 1-ին կետի երկրորդ պարբերությունում սահմանված ժամկետում չկատարված պարտավորությունների, եւ Համաձայնագրի սույն Հավելվածի 3-րդ կետի համաձայն տուժանքի վճարման պարտավորությունների կատարումն ապահովվում է այն ազգային (կենտրոնական) բանկի կողմից, որի պարտավորությունների չափն ԱՄՆ դոլարով գերազանցում է մյուս ազգային (կենտրոնական) բանկի հանդիպակաց պարտավորությունների չափն ԱՄՆ դոլարով, մյուս ազգային (կենտրոնական) բանկին ԱՄՆ դոլարով նշված հանդիպակաց պարտավորությունների չափերի տարբերությանը հավասար գումարին համարժեք դրամական միջոցներ փոխանցելու միջոցով:

ԱՄՆ դոլարով դրամական պարտավորությունների հետ կապված՝ սույն կետում նշված պահանջների կատարումն ապահովվում է հետեւյալ հերթականությամբ.

- առաջին հերթին բավարարվում են Համաձայնագրի սույն Հավելվածի 3-րդ կետի համաձայն տուժանքի վճարմանը վերաբերող պահանջները,

- երկրորդ հերթին բավարարվում են այն պարտավորություններին վերաբերող պահանջները, որոնց կատարման ժամկետը լրացել է, եւ որոնք չեն համարվում ժամկետանց:

- երրորդ հերթին բավարարվում են այն պարտավորություններին վերաբերող պահանջները, որոնք չեն կատարվել Համաձայնագրի սույն Հավելվածի 1-ին կետի երկրորդ պարբերությունում սահմանված ժամկետում:

Համաձայնագրի հավելվածի սույն կետում նշված՝ առաջին Կողմի ազգային (կենտրոնական) բանկի՝ երկրորդ Կողմի ազգային (կենտրոնական) բանկին ԱՄՆ դոլարով դրամական միջոցներ վաճառելու պարտավորության առումով, առաջին Կողմը նույնպիսի պատասխանատվություն է կրում երկրորդ Կողմի նկատմամբ, ինչ առաջին Կողմի ազգային (կենտրոնական) բանկը:

2. Համաձայնագրի սույն Հավելվածի 1-ին կետում նշված՝ առաջին Կողմի ազգային (կենտրոնական) բանկի՝ երկրորդ Կողմի ազգային (կենտրոնական) բանկին ԱՄՆ դոլարով դրամական միջոցներ վաճառելու պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում առաջին եւ երկրորդ Կողմերի միջեւ հետագա փոխհաշվարկներ իրականացնելու նպատակով՝ առաջին Կողմի ազգային (կենտրոնական) բանկին ներկայացվող պահանջները սահմանվում են ԱՄՆ դոլարով՝ առաջին Կողմի ազգային արժույթով երկրորդ Կողմի լիազոր մարմնի արտարժույթային հաշվին դրամական միջոցներ

փոխանցելու օրվան հաջորդող օրվա համար առաջին Կողմի ազգային (կենտրոնական) բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

3. Համաձայնագրի սույն Հավելվածի 1-ին կետում նշված՝ առաջին Կողմի ազգային (կենտրոնական) բանկի՝ երկրորդ Կողմի ազգային (կենտրոնական) բանկին ԱՄՆ դոլարով դրամական միջոցներ վաճառելու պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար առաջին Կողմի ազգային (կենտրոնական) բանկը կամ առաջին Կողմը պարտավոր է տուժանք վճարել, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{Пеня} = \text{Сумма}_{USD} \times \frac{\text{LIBOR}_{USD, o/n} + 2\%}{360} \times \text{Дни}$$

որտեղ՝

Сумма_{USD} = առաջին Կողմի ազգային (կենտրոնական) բանկի կողմից փոխանցման ենթակա գումարը՝ ԱՄՆ դոլարով,

$\text{LIBOR}_{USD, o/n}$ = Բրիտանական բանկային ասոցիացիայի կողմից (British Bankers Association, BBA) այն օրվա համար սահմանված մեկօրյա LIBOR դրույքը՝ ԱՄՆ դոլարի համար, երբ սկսվել է չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը,

Дни = օրացուցային օրերի քանակը, որոնք հաշվարկվում են չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու օրվանից (ներառյալ) մինչև պարտավորությունը պատշաճ կատարելու օրը (բացառելով պարտավորությունը պատշաճ կատարելու օրը):

4. Համաձայնագրի սույն Հավելվածի 1-ին կետում նշված՝ առաջին Կողմի պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում երկրորդ Կողմի ազգային (կենտրոնական) բանկը, որի նկատմամբ տեղի է ունեցել չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը, իրավասու է չկատարված կամ ոչ պատշաճ կերպով կատարված պարտավորության վերաբերյալ պահանջը՝ ներառյալ Համաձայնագրի սույն Հավելվածի 3-րդ կետի համաձայն տուժանքի վճարման պահանջը, հատուցման հիմունքներով փոխանցելու երկրորդ Կողմին՝ առանց առաջին Կողմի եւ առաջին Կողմի ազգային (կենտրոնական) բանկի համաձայնության կամ դրանց նախապես ծանուցելու:

5. Կողմի ազգային (կենտրոնական) բանկը Կողմի Կառավարության կամ լիազոր մարմնի առջև պատասխանատվություն չի կրում մյուս Կողմի կողմից պարտավորությունը չկատարելու

կամ ոչ պատշաճ կատարելու համար, այդ թվում՝ մյուս Կողմի ազգային (կենտրոնական) բանկի կողմից պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

6. Առաջին Կողմի ազգային (կենտրոնական) բանկի կրած ծախքերն ու վնասները՝ կապված իր կողմից Համաձայնագրի սույն Հավելվածով նախատեսված հաշվարկների իրականացման հետ, ներառյալ այն ծախքերն ու վնասները, որոնք առաջացել են արժույթների փոխարժեքների փոփոխության, մյուս Կողմերի կամ մյուս Կողմերի կենտրոնական (ազգային) բանկերի կողմից պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետեւանքով, մյուս Կողմերի կողմից ենթակա չեն փոխհատուցման : Առաջին Կողմի ազգային (կենտրոնական) բանկին սույն կետում նշված ծախքերի ու վնասների փոխհատուցման պայմաններն ու կարգը սահմանվում են առաջին Կողմի կողմից:

7. Համաձայնագրի սույն Հավելվածի նպատակներից ելնելով՝ երկու Կողմերի միջև հաշվարկների (այդ թվում՝ երկու Կողմերի ազգային (կենտրոնական) բանկերի միջև հաշվարկների) իրականացման աշխատանքային օր է համարվում այն օրը, որը միաժամանակ աշխատանքային օր է համարվում այդ երկու Կողմերի եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների համար:

8. Համաձայնագրին համապատասխան հաշվարկներ իրականացնելու նպատակով մյուս (երկրորդ) Կողմի ազգային (կենտրոնական) բանկում բացված՝ Կողմերից մեկի (առաջինի) կենտրոնական (ազգային) բանկի թղթակցային հաշվի, ինչպես նաեւ այդ թղթակցային հաշվի վրա գտնվող դրամական միջոցների նկատմամբ երկրորդ եւ երրորդ Կողմերի դատական ու իշխանության մյուս մարմինները չեն կարող արգելանք կիրառել, արգելափակում, հայցի ապահովման, արգելման կամ սահմանափակման այլ միջոցներ, որոնց միջոցով թղթակցային հաշվի վրա գտնվող դրամական միջոցների օգտագործումն անհնար է դառնում:

9. Համաձայնագրին համապատասխան հաշվարկներ իրականացնելու նպատակով մյուս (երկրորդ) Կողմի ազգային (կենտրոնական) բանկում բացված՝ Կողմերից մեկի (առաջինի) ազգային (կենտրոնական) բանկի թղթակցային հաշվի վրա գտնվող դրամական միջոցների դուրսգրումն առանց առաջին Կողմի ազգային (կենտրոնական) բանկի համաձայնության, չի թույլատրվում, եթե այլ բան նախատեսված չէ թղթակցային հաշվի պայմանագրի պայմաններով:

10. Եթե Համաձայնագրի սույն Հավելվածի 1-ին կետում նշված՝ ԱՄՆ դոլարով դրամական միջոցներ վաճառելու պարտավորությունը 30 օրացուցային օրվա ընթացքում լիարժեքորեն կամ մասնակիորեն չի կատարվում առաջին Կողմի ազգային (կենտրոնական) բանկի կողմից,

ապա մինչեւ առաջին Կողմի ազգային (կենտրոնական) բանկի կողմից այդ պարտավորության լիարժեք կատարումը՝ երկրորդ Կողմի ազգային (կենտրոնական) բանկն իրավասու է առանց սահմանափակումների օգտագործելու առաջին Կողմի ազգային արժույթով այն դրամական միջոցները, որոնք գտնվում են Համաձայնագրին համապատասխան հաշվարկների իրականացման համար նախատեսված՝ երկրորդ Կողմի կենտրոնական (ազգային) բանկի այն թղթակցային հաշվին, որը բացված է առաջին Կողմի ազգային (կենտրոնական) բանկում:

11. Կողմերից մեկի (առաջինի) ազգային (կենտրոնական) բանկն անհատույց հիմունքներով իրականացնում է իրավունքներ եւ կատարում է պարտավորություններ, որոնք նախատեսված են մյուս (երկրորդ) Կողմի ազգային (կենտրոնական) բանկի հետ իր կնքած պայմանագրերով՝ ի կատարումն սույն համաձայնագրի եւ դրան համապատասխան:

**Մաքսային միությունում ներմուծման
մաքսատուրքերի (համարժեք ազդեցություն ունեցող
այլ տուրքերի, հարկերի, եւ գանձումների
հաշվեգրման ու բաշխման կարգի սահմանման եւ
կիրառման մասին Համաձայնագրի**

1. Կողմի լիազոր մարմինը յուրաքանչյուր օր՝ տեղական ժամանակով ընթացիկ օրվա ժամը 16:00-ից ոչ ուշ (Բելառուսի Հանրապետության համար՝ Մինսկ քաղաքի ժամանակով, Ղազախստանի Հանրապետության համար՝ Աստանա քաղաքի ժամանակով, Ռուսաստանի Դաշնության համար՝ Մոսկվա քաղաքի ժամանակով) մյուս Կողմերի երկու լիազոր մարմիններ է ուղարկում հետեւյալ տեղեկությունները՝ հաշվետու ամսաթվի դրությամբ .

Կողմի լիազոր մարմնի միասնական հաշվին փոխանցված՝ ներմուծման մաքսատուրքերի գումարի մասին.

հաշվետու ամսաթվին լիազոր մարմնի կողմից ներմուծման մաքսատուրքերի վճարման հաշվին կրեդիտագրված գումարի մասին,

հաշվետու ամսաթվին վերադարձված՝ ներմուծման մաքսատուրքերի գումարը եւ առանձին՝ ընթացիկ օրվա ընթացքում վերադարձման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարի մասին,

հաշվետու ամսաթվին ազգային (կենտրոնական) բանկի կողմից կատարման համար չընդունված՝ ներմուծման մաքսատուրքերի վերադարձվելիք գումարի մասին,

Կողմերի միջեւ բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքի գումարի մասին,

մյուս Կողմերի արտարժույթային հաշիվներին փոխանցված՝ բաշխված ներմուծման մաքսատուրքերի գումարների մասին,

Կողմի լիազոր մարմնի միասնական հաշվից փոխանցված ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված՝ այդ Կողմի բյուջե մուտքագրված եկամտի գումարի մասին,

լիազոր մարմնի արտարժույթային հաշիվներին փոխանցված ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված՝ տվյալ Կողմի բյուջե մուտքագրված եկամտի գումարների մասին,

բաշխված ներմուծման մաքսատուրքերի այն գումարների մասին, որոնց փոխանցումը մյուս Կողմերի արտարժույթային հաշիվներին դադարեցվել է,

Համաձայնագրի կատարման խախտման դեպքում մյուս Կողմերից տվյալ Կողմին փոխանցված՝ կետանցի դեպքում տոկոսագումարների մասին:

2. Յուրաքանչյուր ամիս հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրվա ընթացքում Կողմի լիազոր մարմինը Կողմերի մյուս երկու լիազոր մարմիններ, ինչպես նաև Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարություն ուղարկում է սույն Հավելվածի 1-ին կետով սահմանված տեղեկությունները՝ աճողական կարգով օրացուցային տարվա սկզբից:

3. Կողմերի լիազոր մարմինները, ստացված տեղեկություններին համապատասխան, իրականացնում են տվյալների օպերատիվ ստուգում:

Անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում կազմվում է արձանագրություն, եւ Կողմերը ձեռնարկում են միջոցներ՝ անհամապատասխանությունները կարգավորելու նպատակով:

4. Սույն Համաձայնագրին համապատասխան՝ Կողմի լիազոր մարմնից Կողմերի մյուս երկու լիազոր մարմիններ եւ Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարություն ուղարկվող տեղեկությունները ստորագրվում են տվյալ լիազոր մարմնի ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

Կողմի լիազոր մարմինը սույն Համաձայնագրով նախատեսված տեղեկություններն ուղարկում է Կողմերի մյուս երկու լիազոր մարմիններ եւ Մաքսային միության հանձնաժողով էլեկտրոնային կապուղիներով՝ տվյալ փաստաթղթերի գրաֆիկական էլեկտրոնային պատճենների տեսքով: